

ՀՏԴ 809.198.1

Հայոց լեզու

**Կարինե Հակոբյան, ավագ դասախոս
Արցախի պետական համալսարան
ակ. Ս. Արբահամյանի անվան հայոց լեզվի ամբիոն
Karine.hakobyan.57@mail.ru**

**ՉԱՓԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆԸ և ՇՐՋԱՍՈՒՑԹԸ Ս.ԽԱՆՅԱՆԻ
ՀԱՅՐԵՆԱՍԿԱԿԱՆ ՊՈԵՄՆԵՐՈՒՄ**

Արցախյան զարթոնքը նոր թափ ու լիցք հաղորդեց Ս. Խանյանի ստեղծագործական կարողությունների ճախրանքին: Ընթերցողների դատին հանձնեց §Արցախի արծիվը և, §Նահատակ լուսո և , §Մհեր!պոեմները : Բանաստեղծը ինքնատիպ ոճով ստեղծել է գեղարվեստական շքեղ պատկերներ , հայրենիքի անկախությունը , ազգային արժանապատվությունն ու հպարտությունը պաշտող ու սրբացնող իրական կերպարներ : Պոեմների լեզվական արվեստին բնորոշ առանձնահատկություններից ուսումնասիրվել են չափազանցությունը և շրջասույթը : Պատկերավորությունը չափազանցության միջոցով անմիջական ու դյուրըմբռնելի է դարձրել հեղինակի արժևորած գաղափարն ու զգացմունքները : Շրջասույթները խտացնում են հույզը , ոճավորում խոսքը :

Բանալի բառեր՝ չափազանցություն, գոյամարտ, շրջասույթ, Արցախ, պոեմ, ազատամարտ, սխրանք, հայրենասպաշտություն, անձնագոհություն:

Карине Акопян

ГИПЕРБОЛА И ИНВЕРСИЯ В ПАТРИОТИЧЕСКИХ ПОЭМАХ С.ХАНЫЯНА

Арцахское пробуждение послужило новым толчком для творчества С. Ханяна. На суд читателей были вынесены поэмы “Орел Арцаха”, “Мученик света” и “Мгер”. Писатель весьма оригинально создал прекрасные художественные образы и реальные персонажи, которые преклоняются перед национальным достоинством и гордостью. Среди особенностей, присущих лингвистическому искусству были рассмотрены гипербола и инверсия. Образность при помощи гиперболы сделала ценную идею автора и его чувства более простыми и легкими. Инверсии усиливают эмоции, придают стилистический окрас слову.

Ключевые слова: гипербола, борьба, борьба за свободу, инверсия, Арцах, поэма, подвиг, патриотизм, самопожертвование

Karine Hakobyan

HYPERBOLA AND INVERSION IN THE S. KHANYAN'S PATRIOTIC POEMS

Artsakh revival served as a new impetus for S. Khanyan's works. The poems “The Eagle of Artsakh”, “the Martyr of the Light” and “Mher” were brought to the readers' court. The writer has created very original beautiful artistic images and real characters who bow to national dignity and pride. Among the features inherent in the linguistic art was considered hyperbola and inversion. Imagery made the valuable idea of the author and his feelings simpler and easier with the help of hyperbole. Inversions reinforce emotions and give stylistic coloring to the word.

Keywords: hyperbole, struggle, struggle for freedom, inversion, Artsakh, poem, feat, patriotism, self-sacrifice

Ս.Խանյանը բանաստեղծական առաքելությունը սկսել է անցյալ դարի 50-ական թվականների սկզբից : Հրատարակել է 15 բանաստեղծական ժողովածու , հեղինակ է բազմաթիվ աշխատությունների և գրականագիտական հոդվածների:

Ունենալով հետաքրքրությունների լայն շրջանակ ` այնուհանդերձ խուսանավել է ազգային ցավոտ խնդիրների թեմատիկան բանաստեղծական աշխարհ բերելու մտքից: Ժամանակի չափանիշներն ու ոգեղեն կաշկանդումները բանաստեղծին թույլ չեն տվել ճշմարտության

բացահայտման մեջ ներդնել գեղարվեստական ճաշակի և պատկերավոր մտածողության իր տաղանդի ողջ ուժը:

Արցախյան զարթոնքը նոր թափ ու լիցք հաղորդեց նրա ստեղծագործական կարողությունների ճախրանքին: Մտավոր և հոգեկան կուտակումները նոր ժայթքումներ տվեցին: Ասելիքը հնչեց մարտական ու զորավոր, իր լեռնաշխարհի պես խրոխտ, բարձրաբերձ, մաքրամաքուր ու խորհրդավոր: Ասել է թե՛ արցախյան ազատամարտը դարձավ Ս.Խանյանի պոեզիայի մարտական երթի

նախակարապետը: Ազատամարտի ստեղծագործական հունձքն ավելի բեղուն էր, քան երբևէ: Ընթերցողի դատին հանձնեց բանաստեղծական նոր շարքեր, §Արցախի արծիվը !, §Նահատակ լուսո !, §Միեր! պոեմները:

§Արցախի արծիվը! պոեմում ներկայացրել է արցախցիների հին ու նոր պատմությունը, նրանց հերոսական անցյալն ու ներկան: Բանաստեղծը պատմական փաստերը օգտագործել է ազգային գոյապայքարի, հոգսերի, խնդիրների տեսանկյունից, արդիական հնչեղություն հաղորդել նրանց: Պատմական հայացքով լուսավորել է ներկա գոյապայքարի վճռական փուլերը՝ վերակենդանացնելով 9-րդ դարի հերոսի՝ Եսայու նեշնչող, անձնուրաց ոգին, հրամցնելով ազատամարտի հերոսներին պատմության մեծ դասը, նախնիների առասպելական սխրանքները: Բանաստեղծ Վ.Հակոբյանի կարծիքով § Արցախի արծիվը ! պոեմը հիշատակարան է մեր հին ու նոր գոյապայքարի:¹

Ազատամարտի գեղարվեստականացումը լայն արձագանք գտավ բանաստեղծի հաջորդ պոեմներում: § Նահատակ լուսո! պոեմը նվիրված է ազատամարտի լեգենդար հերոս Մոնթե Մելքոնյանի սուրբ հիշատակին, իսկ § Միեր! պոեմը՝ հերոս տանկիստ Միեր Դանիելյանի կատարած սխրանքներին: Նյութը ստեղծագործական քուրայում հղկվել ու իմաստավորվել է, ստացել տիպականության ուժ:

Պոեմները գեղարվեստական կատարելության տեսակետից ունեն երանգային տարբերություններ: Փոխվել է ապրումների, զգացմունքների, խոհերի արտահայտման եղանակը:

Բանաստեղծը ազնիվ տքնությամբ և ինքնատիպ ոճով ստեղծել է գեղարվեստական շքեղ պատկերներ, նկարագրություններ, հայրենիքի անկախությունը, ազգային արժանապատվությունն ու հպարտությունը պաշտող ու սրբացնող, մեր օրերին ու տրամադրություններին արժանի իրական կերպարներ:

Պատկերները գեղարվեստորեն մարմնավորելու համար Ս.Խանյանը դիմել է լեզվական տարբեր հնարանքների: Փորձենք ներկայացնել պոեմների լեզվական արվեստին բնորոշ մի քանի առանձնահատկություններ:

§ Արցախի արծիվը ! պոեմը աչքի է ընկնում ազգային էպոսին յուրահատուկ էպիկական շնչով: Պահպանվել են գործողությունների արագ թափը, երևույթների հատկանիշներն ու չափերը, միտումնավոր մեծացված ու չափազանցված ներկայացնելու ձևը: Ի սկզբանե չափազանցությունը գործել է ժողովրդական բանահյուսության ժանրերում, ժողովրդական էպոսում, հեքիաթներում և այլն:

Պ.Պողոսյանը չափազանցությունների երեք տեսակ է տարբերակում՝ նմանական, առավելական և անկարելիական:²

Նմանական չափազանցությունների հիմքում ընկած է չափազանցված համեմատությունը, երբ չափազանցվող երևույթը հավասարեցվում է իրական երևույթին: Դեպքերը զարգանում են չափազանց արագ, կերպարների կամ կողմերի մեջև եղած լարվածությունը հասնում է իր ամենաբարձր աստիճանին: Բանաստեղծը տիպականացրել է կերպարների մտածելակերպը, դիմագիծը, հոգեբանությունը: Մի կողմում բռնակալ, ամբարտավան, գոռոզ, խարդախ Բուդան է, մյուս կողմում՝ խելացի, կշռադատված, ազատատենչ, հայրենասեր իշխան Եսայը: Նա չի հանդուրժում ոչ մի բռնակալի կամայականություններ և կովի է ելել՝ փրկելու իր սրբազան

¹ Ս.Խանյան, ընտիր երկեր, Ստեփանակերտ 2010, հ.3, էջ 8:

² Պողոսյան Պ. Մ., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքները, Երևան, 1991:

հողը , երկիրը , պատիվը , ազատությունը : Հիշյալ չափազանցված համեմատությունները պատկերավոր են դարձնում երկու հսկաների վիճակը :

*Բուդայի գորքը արյունոտ նետվեց դեպի գառիվայր ,
 Հնձած խոտի պես շարվեշար ընկան զինվորներ, գնդեր: (էջ 202)
 Մորեխի պես փովել է հագարացոց գորքը չար: (էջ 185)
 Հեղեղի նման դուրս եկավ գորքը քաջն Եսայու: (էջ 201)
 Իսկ Եսայու անունը թանկ քաղցրանում է ոնց մանանա ,
 Որ Արցախի սարերի պես դարերի մեջ չի մահանա: (էջ 208)
 Ամեն մի կողմը նման էր շարժվող երկաթե ժայռի: (էջ 202)՝*

Հովսեփի և Աբղլահի գորքերի բախումը բացահայտում է արցախցիների առնական հոգու բազմի թափը , պատրաստակամությունը հանուն հայրենիքի , քաջությունն ու առաքինությունը : Հագարացիների ջարդը ավելի ցայտուն և ընդգծված արտահայտել է առավելական չափազանցության միջոցով , երբ երևույթը մեծացվում , ուժեղացվում է առանց իրականի հետ համեմատվելու :

*Արաքսի ափին հագարաց գորքի արյունն էր հորդում ,
 Զենքերի շաշը առաքելական երկինքն էր առել: (էջ 152)*

Բուդայի և Եսայու թեժ ճակատամարտի ահավոր բարդ ու դժվարին իրավիճակների յուրօրինակ նկարագրության արդյունք է հետևյալ պատկերի ծանրության զգացողությունը :

Ու թվում էր , թե շանթ ու ամպրոպից սեզ սարն էր հալվում: (էջ 202)

Արցախի պատմությունը հարուստ է օտար բռնակալների դեմ պայքարի հերոսական դրվագներով : Արցախցու կրծքի տակ քաջի սիրտ է բաբախում , և հաղթելու հավատն է ալիքվում նրա հոգու մեջ : Հողմի պես կատաղած Բուդան ավերել է հայոց երկիրը , որի դեմ կենաց ու մահու կռվի է ելել համառ **արցախցին** : Հեղինակը արցախցու արիության և նրա ատելության ու վրեժխնդրության գաղափարը ընդհանրացրել է հետևյալ չափազանցությամբ :

Մենք նրամիջից կանենք երկու կես: (էջ 174)

Զարամիտ Բուդայի՝ Արցախը կործանելու մտադրությունը երազ է մնացել , քանի որ Տիգրանյան Առանի՝ զավակները օրհասական ու դժվար պահերին բռունցքվելեն՝ պաշտպանելու իրենց հայրենիքի պատիվն ու փառքը , իսկ դրա առհավատյան Արցախի նորոյա գոյապայքարն է :

Պարտավն ավերելու , Ուտիք աշխարհի անունը ջնջելու , Արցախը կործանելու մտադրությունները , նենգ ու դաժան ոստիկանի գայլային ախորժակը հեղինակը անփոխարինելի ճշտությամբ ու վարպետությամբ ներկայացրել է համապատասխան չափազանցությամբ :

Եվ նրա ձայնից ոչ միայն գորքը , սարն անգամ դողաց: (էջ 181)

Մոխրացած շենքերի ու տարածքների զեղարվեստականացումը հոգիդ մղկտացնող ցավի ու մորմոքի դրսևորման արտահայտություն է :

Օուխն այնքան խիտ էր , որ ծածկվել էին արեզակ ու շողք: (էջ 161)

Սմբատի սթափեցնող հորդորները Եսայու հարվածից հետո Բուդայի հոգեվիճակի նկարագրության դիպուկ պատկեր է :

Տասը օր է քո վրանում օվկիանի մեջ տրտմության: (էջ 167)

Միերի արտակարգ ուժը , առնականությունը , վրիժառության ծարավը , հաղթական ու թավ ձայնը , կոփված կամքը բանաստեղծը ներկայացրել է այնպես , ինչպես ինքը տեսել , հոգեբանորեն ապրել ու զգացել է իր տեսադաշտում մեծացող հերոսի առասպելական վեհությունը :

Ուժեղ էր , ափով քարն էլ կշարդեր: (էջ 262)

Թե սիրտս էլ ուզեք , կհանեմ , կտամ: (էջ 261)

Ջուր խմեց , Սասնա Միեր դարձավ: (էջ 259)

¹ Ս.Խանյան , Ընտիր երկեր , Ստեփանակերտ , հ.3 ,2010
 Մյուս բոլոր օրինակները բերված են նշված հատորից

Պատկերավորությունը չափազանցության միջոցով անմիջական ու դյուրամբռնելի է դարձրել հեղինակի արժևորած գաղափարն ու զգացմունքները , որոնք անցել են երևակայության սահմանը ` հիշեցնելով Սասունցի Դավթի և Մարա Մելիքի մենամարտը : Եսայու զարկից հետո `

Թուրք դուրս թռավ Բուղայի ձեռքից և Տողասարից գնաց մխրճվեց Քիրս սարի կողին:

Եսայու զարկից երկինքը ճեղքեց Բուղայի գուրզը:

Եվ նրա զարկից Բուղայի բերնից հուր-կրակ տեղաց:(էջ 203)

Հետևողականորեն ու վարպետությամբ բանաստեղծը ներկայացրել է ժողովրդի և իշխան Հովսեփի հոգեկան ապրումները , սպասումները , ուրախությունները , բերկրանքը , գովերգել նրա` տղա ունենալու հրաշքը :

/Յ. Ս.Խանյան , Ընտիր երկեր , Ստեփանակերտ , հ.3 ,2010/

Մանուկ չէ նա , հրաշք է մի ,

Աչքերն արև ,

Լուսնաշողիկ այտեր ունի:

Թմիլիկ թներ :

Ժամերով է աճում տղան

Բարություն պերճ ,

Քիչ է մնում նստի , խաղա

Մի օրվա մեջ:(էջ 140)

Հրաշամանուկի ծնունդը ոգևորել է Դիզակա ժողովրդին : Նրանք դարերի ծանր արհավիրքների միջով են անցել , սակայն չեն կորցրել հավատը լուսավոր ապագայի նկատմամբ : Իրենց անպարտելի ուժը , լավագույն ձգտումներն ու խոհերը , հող հայրենին պաշտպանելու հզոր տաղանդը կապել են այդ տղայի լույս աշխարհ գալու հետ: Նա պիտի պահի չքնաղ գավառը և դառնա հոր գործի շարունակողը :

Հագարացոց բանակի ահռելի քանակի սարսափելի տպավորությունը , որը կորցրել է իր ուժը վեհագույն իշխանի անպարտ կեցվածքի առաջ , բանաստեղծը ավելի ահավոր ու ցնցող դարձնելու նպատակով գրել է `

Թիվ կա Արցախի անտառաց ծառին , թիվ չկա գորքին:(էջ 150)

Եսայու ձիու թռիչքի թափը մարտադաշտում մարմնավորել է ժողովրդական յուրօրինակ լեզվամտածողությամբ :

Եսայու սպիտակ ձին էր , որ խրխնջում էր իր թռիչքի մեջ Քիրսին հավասար:(էջ 202)

Նկատելի է սակավ գործածություն ունեցող չափազանցության մեկ այլ տարատեսակ , որ կոչվում է սահմանազանցում (գրոտեսկ): Հեղինակը , օգտվելով այդ միջոցից , ժողովրդական շեշտ ունեցող բառերի գործածությամբ , միտումնավոր կերպով Բուղայի արտաքին նկարագրությունը դարձրել է անսովոր , ծիծաղելի ` կրկին ընդգծելով նրա անմարդկային , հրեշավոր հոգեբանությունն ու դիմագիծը :

Կատաղել է արդեն Բուղան ,

Չի խնայում նա ոչ ոքի ,

Դիվային է նրա հոգին ,

Սատանա կա ամեն պոզին ,

Պիտի ջարդենք մենք այդ բոզին...:(էջ 180)

Չափազանցությանը իմաստով հակառակ է նվազասույթը (լիտոտան) , որը քիչ գործածություն ունի բանաստեղծի պոեմներում : Բուղային ոգևորելու համար Եսայու հնարավորությունները փոքրացված ձևով է ներկայացվել ` ասելիքը դարձնելով նպատակային և կողմնորոշող :

Ինչ պիտի անի լեռան գագաթին ,

Հացը մի ջվալ , ջուրը մի գավ է:(էջ 192)

Այս հնարանքը հիմնականում արտահայտվել է համեմատության մեջ :

Մեր ոտքերի տակ կյոքի Բուղան ,

Ոնց փղի վրա հաչող շան թուլան :(էջ 174)

Արցախցին ոչ թե զավթել , այլ պաշտպանել է իր երկիրը և երբեք չի ների ոստիսին: Հնարանքը իշխանի ասելիքը դարձրել է բնութագրող և մարտական :

Կերպարը անհատականացնելու, մթնոլորտը շիկացնելու, գաղափարական միտումները բացահայտելու, խոսքին պատկերավորություն, վերամբարձություն, հնչեղություն հաղորդելու նպատակով Ս.Խանյանը գործածել է շրջասույթներ (պերիֆրազ): Շրջասույթը առարկայի նկարագրական անվանումն է, որը բացահայտում է փոխարինվող առարկայի էական հատկանիշները: ՏԱրցախի արժիվը՝ շրջասույթը գործածվում է Եսայի արտահայտության փոխարեն՝ բնութագրելով հայրենասեր արցախցու համահավաք բնավորությունը՝ դարերի տարողություն ունեցող պատմության հենքի վրա:

Շատ ինքնատիպ ու պատկերավոր են մայր Արաքսը բնութագրող շրջասույթները: Հեղինակը գետի գործառույթները նորովի է իմաստավորել և արժևորել՝ որպես հայ ժողովրդի հաղթական ու ողբերգական պատմությունների ակնատես, գաղափարախոս, կյանք, լույս, ջերմություն ու կենսունակություն պարզևոգ զարկերակ:

*Դեմը Արաքսն էր՝ պատգամախոսը հայոց դարերի,
Մայր Հայաստանի մեծ զարկերակը, դուստրը լուսարար:(էջ 150)*

Ուշագրավ են ՏՆահատակ լուսո՝ պոեմի գործող հերոսին՝ լեգենդար Ավոյին, ներկայացնող շրջասույթները, որոնք պարուրում են հոգիդ հույզերով ու զգացմունքներով: Ավոն արմատներով Սասունցի է, հայոց Մեծ Եղեռնից մազապուրծ փրկվածների հետնորդ: Տակավին դեռահաս էր, երբ նրա հոգում արճճի պես ծանրացել էր ազգի ճակատագրի ողբերգական առեղծվածը: Բանաստեղծը հերոսի սկզբունքային գծերից ընդգծել է ամենաէականը՝ վրիժառության գաղափարի իրականացումը, որի համար ասպարեզ բացեց արցախյան գոյամարտը:

*Եվ Հայաստանի ազատագրման Գաղտնի բանակը ելնում է ոտքի,
Չեն թողնի երբեք, որ բանտում մնա վրիժառունների աննահանջ ոգին:(էջ 220)*

Մեկ այլ դեպքում Ավոյի փոխարեն գործում է հետևյալ շրջասույթը, ինչպես՝
Բայց չկա Ավոն՝ Աստվածը մարտի:(էջ 257)

Մոնթե Մելքոնյանը Արցախ է եկել 1991 թ. աշնանը: Մասնակցել է Շահումյանի շրջանի տարբեր գյուղերում ընթացող մարտերին: Ամեն տեղ եղել է մարտի Աստվածն ու ոգին: Անմիջապես աչքի է ընկել թե գիտական իմացությամբ, թե ռազմական պատրաստականության բարձր մակարդակով: Չորս ամսից հետո Մոնթեն տեղափոխվել է Մարտունի և դարձել հանուրի հրամանատար: Նահատակվել է 1993թ. հունիսի 12-ին: Թշնամին ջախջախվել է, բայց չկա մարտի Աստվածը: Ժողովուրդը ծանր է տարել իր լավագույն զավակի կորուստը: Անցել են տարիներ, բայց մինչև այսօր էլ, երբ խոսում են Ավոյի մասին, իրենց արցունքները զսպել չեն կարողանում թե՛ ժողովուրդը, թե՛ զինվորները, թե՛ մարտական ընկերները:

Մոնթեի աներևակայելի սխրանքները բխել են դեպի իր ժողովուրդն ու հայրենիքն ունեցած որդիական սիրուց: Արցախում ցայտուն բացահայտվել են նրա խառնվածքի անսովորությունը, բացառիկ մարդասիրությունն ու ասպետականությունը, անձնագոհությունն ու պատրաստականությունը ի սեր իր ժողովրդի փրկության, հանդուգն ու համարձակ բնավորությունը, հարմար պահին իր գործողությունների պլանը ծավալելու և դժվարին իրավիճակներում ակնթարթային վճիռներ կայացնելու բացառիկ ընդունակությունը, քաղաքագետի ու զորավարի փայլուն տաղանդը:

ՏՀայոց Աղվանքի կտուր՝ շրջասույթը թե ոճական, թե իմաստային տեսանկյունից տեղին ու արդարացված է: Աղվանքի տարածքային ամբողջությունը միավորող և իրար շաղկապող ծանրության կենտրոնական հենասյունն ու նրա պաշտպանական վահանը բոլոր իրավիճակներում եղել է Արցախը: Նույն տրամաբանությամբ Դիզակն՝ Արցախի դարպասն է:

*Դիզակն՝ Արցախի դարպասն ամուր,
Արցախն՝ Հայոց Աղվանքի կտուր:(էջ 173)*

Հեղինակը խոհուն մտքերով և նկարագրական հյուրեղ արտահայտություններով բնութագրել է պատմական Հայաստանի բաժան-բաժան տարածքային միավորները: Մրտի անհուն ցավով ու մորմոքով ներկայացրել է նրանց ողբերգական ճակատագիրը, որ անիրավ մարդիկ (Աթաթուրքից մինչև Լենին ու Ստալին) նվիրել են մեր թշնամիներին: Չանգեզուրն էլ, որի փոխարեն պատկերավոր գործածել է ողնաշարը Հայոց երկրի(էջ 239) շրջասույթը, պաշտպանել է իր Տհանճարով ջահակիրի՝ գորահրամանատար Նժդեհը: Հիմա ժամանակն է

հարցի արդարացի լուծման : Անցյալը դաս է , ժամանակի երևույթները գնահատելու և ճիշտ արժևորելու : Պատմության տրամաբանական ընթացքը դարձավ գոյապայքարի ուղենիշ աստղը :

Նախիջևանի փոխարեն օգտագործել է հայոց երգի **ծովը գողթան**(էջ 238) , Աղդամի փոխարեն ` **բերքի շտեմարան**(էջ 250) , Գլաձորի և Տաթևի փոխարեն ` **արևածին մտքի տաճար**(էջ 239) , Մռավի փոխարեն ` **նահապետ պապ** (էջ 281) և այլն :

Ս.Խանյանը պատկերել է արցախյան գոյապայքարը : Հետևաբար բնական է պատերազմի, զինվորական առօրյայի հետ կապված պատկերավոր արտահայտությունների կիրառությունը , ինչպես ` հրասայլ ` երկաթե ձի(էջ 286) , նոնակ ` երկաթե հուր(էջ 286) և այլն :

Երբեմն հանդիպում են հեղինակի վերաբերմունքը , համակրանքը արտահայտող շրջասույթներ , ինչպես ` Ստալին բառի փոխարեն օգտագործել է **բեղավոր Սոսո** (էջ 238), Եվրոպայի փոխարեն ` **չարի դայակ**(էջ 221) , թուրքի փոխարեն ` **գորշ գայլ** (էջ 281), Քրիստոսի փոխարեն ` **Տերը վերին** (էջ 183), Գրիգոր Մեծի փոխարեն ` **Հայրապետը սուրբ** (էջ 250)և այլն :

Այսպիսով ` շրջասույթները խտացնում են հույզը , ոճավորում խոսքը , նպաստում են պատումի քնարականությանը :

Օգտագործված գրականություն

- 1.Ս.Խանյան, Ընտիր երկեր,հ.3,Ստեփանակերտ,2010:
- 2.Լ. Եզեկյան, Ոճագիտություն, Եր., 2003:
- 3.Պ.Մ.Պողոսյան, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքները, Երևան,1991:
- 4.Ս. Մելքոնյան,Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Երևան, 1984: